# ԱԶԴԱՅԻՑ

## ԱՅՎԱԶՈՎՍՔԻԻ ՄԱՀԸ

Երէկ, Թերթը մամուլի տակ ըլլալէն ետքը հեռագիրը գուժեց նշանաւոր հայ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիի մահը։ Աշխարհահռչակ արուեստագէտին մահուամբ կ'անհետանայ հայ ցեղին ծնունդ տուած ամէնէ՛ն հոյակապ հանճարներէն մէկը, ու մեզի հետ միասնոյն ատեն բովանդակ արուեստագիտական աշխարհը կ'ողբայ արուեստագէտ մը՝ զոր ընդհանուր քննադատութիւնը դարուս առաջին ծովանկարիչը հռչակած էր։

Յովհաննէս Կոստանդեան Այվազովսքի ծնած էր 1817 յուլիս 17ին, Ղրիմի Թէոդոսիա քաղաքին մէջ։ Իր նախնիքը օսմանեան հպատակ էին և իրենց ընտանեկան մականունը ո՛չ թէ Այվազովսքի, այլ Հայվազովսկի էր։ Անցեալ դարուն մէջ Թուրքիայէն գաղթած են Կալիցիա, ուր մինչև այսօր դեռ կը գտնուին կալուածատէր Այվազովսքիներ՝ որոնց Աւստրիոյ կայսրը ազնուականութեան տիտղոս տուած է։ Ընտանեկան անհամաձայնութիւն մը պատճառ եղած է որ Այվազովսքիի հայրը բաժնուի իր հարազատ եղբայրներէն ու Կալիցիայէն ելլելով հաստատուի Մոլտավիա-Վալաքիոյ մէջ, ուր կը զբաղէր վաճառականութեամբ։ Զարգացած անձ մըն էր, տեղեակ Թրքերէնի, հայերէնի, հունգարերէնի, գերմաներէնի, հրէերէնի և . . . գնչուերէնի. առնչմէ զատ գիտէր Դանուբեան իշխանութեանց բոլոր կենդանի բարբառները։ Քիչ ետքը կը փոխադրուի Ղրիմ, ուր 1812 Թուականին՝ սոսկալի ժանտախտ մը պատճառաւ կը զրկուի իր կայքերուն մեծագոյն մասէն, այնպէս որ Յովհաննէսի ծնած պահուն ձեռքը մեծ բան մը չի մնար երբեմնի հարստութենէն

# ՍԱԿԱՐԱՆ

Երէկ կէս օրէն վերջը մեր Սակարանին մէջ խիստ ոգեւորուած գործառնութիւններ եղան. քոնսոլիտէն մինչև 25 ղրշ. 27 փր. և երկաթուղին 122 Փր. 78 ըլլալով, բայց Թրանսվալը գրեթէ անշարժ մնաց։ Այսօր թէև Բարիզի Սակարանի հեռագիրը, բաղդատմամբ երէկուանին, 10 սնդ. պակաս է, սակայն Լոնտոնինը բարձր ըլլալով ըստ այնմ օսմ. քոնսոլիտէն ալ հոս կ'արժէ 25 ղրշ. 15 փր. և երկաթուղին 121 Փր. երեք քող.։ Այսօր ալ կարգը Թրանսվալինն է, որովհետեւ հոս կը գնեն 73.25 Փր.ի, Բարիզի մէջ 75ուկէսի և Լոնտոնի մէջ ալ երեք անգլիական ոսկիի, որմէ կը մակաբերուի թէ Ալպիոն յաջողութիւն ունեցած է «ագարակապաններուն»—Պոէրներուն—վրայ։

## ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

### ՓԱԿՈՒՄ

| | | | |
|---|---|---|---|
| Օսմ. Քոնսոլիտէ Սեռի Դ. | Օ. Ո. | 25 | 12 1/2 |
| Ամէնէն բարձր գին | » | 25 | 27 |
| Ամէնէն վար գին | » | 25 | 12 |
| Ռումէլիի Երկթ. զոց. | Ֆր. | 121 | 25 |
| Ամէնէն բարձր գին | » | 122 | 87 |
| Ամէնէն վար գին | » | 121 | 12 |

### ԲԱՑՈՒՄ 25 Ապրիլ

| | | | |
|---|---|---|---|
| Օսմ. Քոնսոլիտէ Սեռի Դ. | Փ. Կ. | 25 | 13 |
| Ռումէլիի Երկաթուղի | Ֆր. | 121 | 50 |
| Օսմանիյէ | | — | — |
| Ռէժի | | — | — |
| Օսմ. Պանքա | | — | — |
| Քռէտի Ժէնէրալ ՕԹՕմ. | | 8 | 34 |
| Յու. Օթ. Նաւմ է Վալէօն | Ա. Ո. | 0 | 15 |
| Օսմ. Ապահ. Ընկ. | | 4 | 30 |
| Թրամուէյ բաժնեթ. | | 670 | — |
| » ժուիսանս | | 20 | — |
| » պարտաթ. | Ֆր. | 482 | — |
| Քարափ Կ. Պոլսոյ | » | 469 | — |
| Թրանսվալ | » | 73 | 50 |

### ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

| | | | |
|---|---|---|---|
| 20 Ֆրանքնոց | Ղրշ. | 87 | 18 |
| Անգլիական ոսկի | » | 110 | — |
| Բոլ էմբէրիալ | » | 90 | 20 |
| Քրիմից | » | 51 | 08 |
| Մէճիտիէ արծաթ | » | 108 | 05 |
| Մէթալիք | » | 96 | 30 |
| Ռուսլիք Թղթադրամ | Օ. Ո. | 8 | 61 |

### ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

| | | | |
|---|---|---|---|
| Լոնտոն 3 ամիս | Ղրշ. | 108 | 37 1/2 |
| » » » չէք | » | 109 | 22 |
| Բարիզ » » | Ֆր. | 23 | 83/4 |
| » » » չէք | » | 23 | 98 3/4 |
| Վիէննայի առտոկոս չէք | Մաքր | 18 | 69 |
| Իտալիա չէք | Լիռէ | 22 | 12 |

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

### ԼՈՆՏՈՆ, 7 Մայիս

| | | |
|---|---|---|
| Անգլիական Քոնսոլիտէ | 100 | 68 |
| Օսմանեան Ռանթ սէռի Բ. | — | — |
| Օսմանեան Ռանթ սէռի Դ. բաց. | 23 | — |
| Օսմանեան Ռանթ սէռի Դ. զոց. | 23 | — |
| Օսմանեան Պանքա | 13 | 12 |
| Ռուսական 1890 | — | — |
| Հելլենական 5 0/0 | 40 | 15 |
| » Մօ օրօյ | 45 | — |
| Պուլկարական 1888 | 85 | — |
| Էժիբսիէն իւնիֆիէ | — | — |
| Տօմինիալ | 103 | 75 |
| Թրանսվալ | 3 | 95 |
| Այտըն երկաթուղի | 10 | — |
| Փոխառնութ. ԼՆ | 25 | 425 |

### ԲԱՐԻԶ, 7 Մայիս

| | | | |
|---|---|---|---|
| Ֆրանս. Ռանթ 3 0/0 | | 101 | 15 |
| » » 3 1/2 0/0 | | 103 | 25 |
| Օսմ. Քոնս. սէրի Դ. ) բաց. | Ղրշ. | 23 | 50 |
| ) զոց. | » | 23 | 35 |
| » » » Բ. | » | — | — |
| » » » Գ. | » | — | — |
| Օսմ. Կայս. Պանքա | » | 579 | — |
| Օսմանիէ | » | 427 | — |
| Ռումէլի երկաթուղի | Ֆր. | 123 | |
| Օսմ. մաքսատուն | » | 512 | — |
| Օսմ. Ռէժի | » | 327 | — |
| Բրիօրիթէ Թիւրք 4 0/0 | | 485 | — |
| Քռէտի Լիոնէ | | 1153 | — |
| Իտալական Ռանթ | » | 95 | 30 |
| Ռասպիական ապրանքին | » | 73 | 45 |
| Էժիբսիէն իւնիֆիէ | | — | — |
| Թրանսվալ | » | 75 | 50 |
| Չէք Լոնտոնի վրայ | » | 25 | 180 |
| Դրամազեղչ | » | 63 | 50 |

### ՎԻԷՆՆԱ, 7 Մայիս

| | | | |
|---|---|---|---|
| Փոխան. Լոնտոնի վրայ | » | 242 | 90 |
| Ռումէլիի երկաթուղի | » | 118 | 40 |
| Օսմ. Ռէժի | » | 302 | — |

### ՊԵՐԼԻՆ, 7 Մայիս

| | | | |
|---|---|---|---|
| Ռուպլը | » | 216 | 60 |
| Ռումէլիի երկաթուղի | » | 119 | — |
| Անատ. երկթ. պարտաթուղթ | » | — | — |
| Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս. | » | 20 | 300 |

### ՊՐԻՒՍԷԼ, 7 Մայիս

| | | |
|---|---|---|
| Օսմ. Քոնս. սէրի Դ. | 23 | 25 |
| Ռումէլիի երկաթուղի | 121 | — |


AU PRINTEMPS

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԵԱՆՑ

345, Բերա, Մեծ փողոց, 345

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Տիկին,

Պատիւ ունինք ծանուցանել Ձեզ թէ Բերա, Մեծ Փողոց, թիւ 345, «Օ ՊՐԷՆԹԱՆ» անուն մեծ վաճառատուն մը հաստատած ենք որուն բացումը տեղի պիտի ունենայ ապրիլ 25ին։

Մեր նորաձեւութեանց մթերքն են խիստ ընտիր բրդեղէններ, կերպասներ, մետաքսեղէններ և կանանց արդուզարդի յատուկ առարկաներ, որոնք արդէն Բարիզէն հասած են։ Բոլոր վաճառքներու ընտրութիւնը մեծ ուշադրութեամբ կատարուած է։

Մեր վաճառատան ապրանքները միմիայն Ֆրանսական են, խնամով պատրաստուած ընտիր տեսակէ, և իրապէս չափաւոր ու աժան գիներով։

Յուսալով որ Ձեր այցելութեամբ պիտի պատուէք զմեզ, կը խնդրենք, Տիկին, ընդունել մեր խորին յարգանքները։

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

574 13—30

